# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**2016 թվականի հունվարի 13-ին կնքված պետության կարիքների համար ինտերնետ կապի տրամադրման ծառայությունների մատակարարման N ՀՀ ՔԾԽ ԾՀԾՁԲ-15/1-1 պետական գնման պայմանագրի**

ք. Երևան

15 հունվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս խորհրդի աշխատակազմի ղեկավար Ս. Յազերյանի, որը գործում է խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության խոշոր բիզնեսի վաճառքի և պետական մարմինների հետ աշխատանքների իրականացման բաժնի պետ Գ. Ջատիկյանի (այսուհետև՝ Կատարող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2016 թվականի հունվարի 13-ին կնքված N ՀՀ ՔԾԽ ԾՀԾՁԲ-15/1-1 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ «Պայմանագիր») 4.1.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է սույն համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուին հանձնել Ծառայությունը՝ համաձայն սույն համաձայնագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա համար:

1.2 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և տարածվում է կողմերի միջև 2016 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

## 2. Համաձայնագրի գինը

2.1 Սույն համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն համաձայնագրի N2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2.3 Մատուցված ծառայության դիմաց վճարումը նախատեսվում է կատարել ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

## 3. Այլ դրույթներ

3.1 Սույն համաձայնագիրը բաղկացած է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N1 և N2 հավելվածները՝ բաղկացած 3 էջից, հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է N ՀՀ ՔԾԽ ՇՀԾՁԲ-15/1-1 պետական գնման պայմանագրի անբաժանելի մասը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀՎՀՀ 01541632

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
ք. Երևան, Աճառյան 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ 02500052
Հեռ. 010-23-77-97

(ստորագրություն)

*Հավելված N 1*

*13 հունվարի 2016 թ. կնքված N ՀՀ ՔԾԽ ՇՀԾՁԲ-15/1-1*
*պետական գնման պայմանագրի*
*15 հունվարի 2016 թ. կնքված N 1 համաձայնագրի*

# ՀԱՄԱՑԱՆՑԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Քանակը | Ձեռքբերվող ծառայության տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|
| | | | |
| 1. | Համացանցի ծառայություններ | 1 | Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով, **50 մբիթ/վրկ**, երաշխավորված երկկողմանի սիմետրիկ կապի արագություն (ՀՀ և ՀՀ տարածքից դուրս այցելած կայքերի համար), անսահմանափակ:<br>Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում:<br>Ինտերնետային կապի երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային հանգույցի և օգտվողի միջև (1:1 օգտագործման գործակցով):<br>Անհրաժեշտության դեպքում՝ պահուստային միացման առկայություն ապահովելով համարժեք արագագործությունը, հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում, սերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն, օգտվողի կողմից ՀՀ տարածքից դուրս այցելած հանգույցների վերծանման տրամադրում:<br>Օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում, կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն, ծառայության հետ կապված ծրագրային ապահովում, պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով):<br>Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում ՝ըստ պահանջի:<br>Ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուի համակարգչային մասնագետին:<br>Անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ սարքավորումների տրամադրում՝ վարձակալության հիմունքով: |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| Ծառայության մատուցումը նախատեսվում է իրականացնել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 30 դեկտեմբեր 2016 թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀՎՀՀ 01541632

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
ք. Երևան, Ահարոնյան 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ 02500052
Հեռ. 010-23-77-97

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*13 հունվարի 2016 թ. կնքված N ՀՀ ՔԾԽ ԾՀԾՁԲ-15/1-1*
*պետական գնման պայմանագրի*
*15 հունվարի 2016թ. կնքված N 1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Գնման առարկայի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1. | Համացանցի ծառայություններ | 243000 | 243000 | 243000 | 486000 | 486000 | 486000 | 729000 | 729000 | 729000 | 1000000 | 1000000 | 1000000 | **1000000** |

- *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀՎՀՀ 01541632

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
ք. Երևան, Ահարոնյան 2
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ 02500052
Հեռ. 010-23-77-97